

ԳԼՈՒԽ ԺՁ ԱՐԱՄԱՆԵԱԿԻ ԲԵՐԴԸ

Ինչպես լռիկ եկած էին մեր երկու ընկերները, նոյնպես լռիկ կը դառնային, բայց ծերը իր շոր վոյն վրայ կորաց եալ կը դիտեր շարունակ, որ երիտասարդ իշխանին ճակատը պարզեալ էր, այն դառնութիւնը եւ անհանդարտ հոգը, որ քիչ առաջ իւր երեսին վրայ ոկարեալ էր՝ անհետ եղած էր բոլորովին: Երբեմն ձեռոք իւր նժոյգին պարանոցը կը շոյէր, երբեմն զուարթ դեմքով գլուխը շուրջ դարձնելով բնութեան ծիծաղն իբրեւ թէ կը փնտրեր, եւ յանկարծ գլուխը ետին դարձնելով,

– Յայրի՛կ, այս ձեր մայր իշխանուհին սովորական կին չէ, ես նորա նման ոչ ոք չեմ տեսեր կեանքիս մէջ,– ըսաւ:

– Այո, իշխան, բոլոր շրջակայքը՝ ամենքը ազգայինք եւ օտարք իւր իմաստութեան եւ առաքինութեան գովութիւնը կ'ընեն եւ կը յարգեն: Իսկ մենք իւր ժողովուրդը եւ մեր ամենէն յետինը՝ աստուծմէ ետքը, մեղա՛յ, մեղա՛յ, Աստուածամօր պէս զիսքն կը պաշտէիք պիտի ըսէի:

Ծերուն այս վկայութիւնն էլ խոր մտածութեան մէջ թաղեց իշխանը եւ հազիւ թէ Սմբատաւան հասան, առանց ձիւն իջնելու հրամայեց իւր փոքրիկ գունդին, որ հեծնէն, եւ աւանապետն քսակ մը տալով ինդրեց քաղցրութեամբ, որ գոհ ընէ իւր մարդիկը եւ փոխանակ Արտահանի ճամփան բռնելու, Կարուց ճամփան բռնեց որովհետեւ այնպէս իմացեր էր թէ կաթողիկոսը Բագարան երթալու միտք ունէր Բուղայի երկիւղէն, եւ անկից Յունաց սահման անցնիլ Կարնոյ քաղաք, ինք կը յուսար թէ Բագարան իւր նամակը կրնար իրեն հասցնել:

Ուստի երբ Բագրատունեաց քաղաքը մտաւ եւ միջնաբերդը գնաց իւր անուանակից Աշոտ Բագրատունին տեսնելու, նա շատ այլայլած գտաւ, վասնզի երկու լուր մէկտեղ առած էր, նախ Յովհաննես կաթողիկոսին մահը, իսկ երկրորդ Բուղայէ հասած հրաման մը, որ ստիպաւ՝ հայրը՝ Սմբատ Սպարապետը կուգէր, որ Մոկաց երկիրն